



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ
Ռ. ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ

«12» հունիսի 2025 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

*Լուսինե Գազիկի Նազարյանի «Դեղագործական հոգածության բարելավման
հնարավոր ուղիների մշակումը փորլուծության ախտանիշի դեպքում» թեմայով
ատենախոսական աշխատանքի վերաբերյալ ներկայացված ԺԵ.00.01-
«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար*

Լուսինե Գազիկի Նազարյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է փորլուծության ախտանիշի դեպքում դեղագործական հոգածության բարելավման հնարավոր ուղիների մշակմանը:

Աշխատանքն իրականացվել է դ.գ.թ., դոցենտ Ս.Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դեղագործական հոգածության գործընթացն աշխարհի շատ երկրներում անընդհատ բարելավման կարիք ունեցող հիմնախնդիր է:

Տարբեր երկրներում անցկացված ինքնաբուժմանը նվիրված շուրջ 40 հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ աշխարհի շատ երկրների համար որոշ օրինաչափություններ ընդհանուր են, և բնակչության քառորդ մասը ԱՂՏ դեղերի օգնությամբ զբաղվում է ինքնաբուժմամբ՝ մեծ պատասխանատվությամբ վերաբերվելով իրենց առողջությանը:

«Պատասխանատու ինքնաբուժման» հայեցակարգի ընդունումն ու արմատավորումը երկրների դեղային քաղաքականության տարրերից է, որը հնարավորություն է տալիս առողջության համար կատարվող ծախսերի մի մասը պետությունից տեղափոխելու սպառողի վրա, քանի որ առանց դեղատոմսի տրվող (այսուհետ՝ ԱՂՏ) դեղերի վրա կատարվող ծախսերը ապահովագրական միջոցներով չեն փոխհատուցվում: Դրա համար էլ պատասխանատու ինքնաբուժման հայեցակարգը շատ երկրներում լայնորեն խրախուսվում է: Մակայն, թույլ զարգացած ու զարգացող երկրներում, այդ թվում և Հայաստանում վճարովի բուժօգնության պայմաններում բնակչության ցածր վճարունակության հետևանքով տարածված է չհիմնավորված և անվերահսկելի ինքնաբուժումը: Այդպիսի ինքնաբուժումը հղի է նաև վտանգավոր հետևանքներով՝ սկսած դեղի սխալ ընտրությունից մինչև դեղային թունավորումներն ու լուրջ հիվանդությունների քողարկումը: Հետևաբար

թունավորումներն ու լուրջ հիվանդությունների բողարկումը: Հետևաբար ինքնաբուժման անհրաժեշտությունն ընդունելով, միաժամանակ պետք է հաշվի առնել դրա հնարավոր վտանգը և դրանից խուսափելու համար ինքնաբուժման գործընթացը դարձնել կառավարելի՝ իրավիճակը պահելով մասնագիտական հսկողության ներքո:

Այս առումով հեղինակի ընտրած առողջության խանգարումը, որն ուղեկցվում է փորլուծությամբ, իրենից գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող ախտանիշ է, որի անվերահսկելի մոտեցումը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ բուժառուի առողջությանը: Ուստի, ինքնաբուժման գործընթացը կառավարելի դարձնելուն ուղղված հետազոտությունները, անշուշտ լուրջ գիտական հետաքրքրություն են ներկայացնում, մանավանդ, որ Հայաստանի Հանրապետությունում չեն կատարվել նմանատիպ հետազոտություններ:

Հեղինակի կողմից դրվել և հաջողությամբ լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Իրականացնել փորլուծության ախտանիշի դեպքում դեղեր ընտրելիս սպառողների տեղեկատվական աղբյուրների վերլուծություն՝ դեղագործական հոգածության օպտիմալացման հնարավոր ոլորտները բացահայտելու նպատակով:
2. Գնահատել դեղատան աշխատակիցների կողմից տրամադրվող դեղագործական հոգածության որակը՝ փորլուծության ախտանիշի դեպքում:
3. Ուսումնասիրել դեղագործական հոգածության ստանդարտացման համակարգի առկայությունը դեղատնային կազմակերպություններում:
4. Իրականացնել դեղագործական խորհրդատվությունը կարգավորող օրենսդրության համալիր ուսումնասիրություն, վերլուծություն և առկա թերությունների վեր հանում:
5. Մշակել և գիտականորեն հիմնավորել միջոցառումների համալիր՝ ուղղված սպառողների շրջանում փորլուծության ժամանակ կիրառվող ԱԴՏ դեղերի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանը, ինքնաբուժման անցանկալի հետևանքների նվազեցմանը:
6. Մշակել դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկ և ալգորիթմ նախատեսված փորլուծության ախտանիշի համար և պիլոտային ծրագրի շրջանակներում ներդնել այն Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագործության կառավարման ամբիոնի կատարելագործման ծրագրում և դեղատնային կազմակերպություններում՝ որպես դեղատան աշխատողի ուղեցույց:

Աշխատանքի գիտական նորույթը: Ուսումնասիրության շրջանակներում ապացուցվել է փորլուծության դեպքում կիրառվող ԱԴՏ դեղերի խորհրդատվության ժամանակ անհրաժեշտ տեղեկատվության ստանդարտացման և դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի կիրառման անհրաժեշտությունը:

Մշակվել է դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկ և ալգորիթմ՝ փորլուծության ախտանիշի համար և ներդրվել է այն դեղատնային կազմակերպություններում՝ որպես դեղատան աշխատողի ուղեցույց: Գնահատվել է

այդ թերթիկի և ալգորիթմի արդյունավետությունը բոլոր ներդրված դեղատնային կազմակերպություններում: Փորլուծության համար նախատեսված տեղեկատվական թերթիկն ու ալգորիթմը ներդրվել է նաև Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագործության կառավարման ամբիոնի կողմից իրականացվող կատարելագործման դասընթացի ծրագրում:

Հիմնավորվել է դեղատան աշխատակիցների պահանջներին վերաբերվող օրենսդրական կարգավորումների և պատշաճ դեղատնային գործունեության (ՊԴԳ) պահանջների ներդրման նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնավորվել է սպառողների համար նախատեսված առցանց տեղեկատվական հարթակի ստեղծման անհրաժեշտությունը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Լուսինե Նազարյանի կողմից ներկայացվել են մի շարք առաջարկներ, որոնք կարող են նշանակալի դերակատարում ունենալ հանրային առողջության պահպանման գործընթացում և ՀՀ դեղերի շրջանառության մանրածախ օղակի գործունեության կարգավորումներում: Մասնավորապես հեղինակն առաջարկում է.

1. Ստեղծել սպառողների համար նախատեսված առցանց տեղեկատվական հարթակ՝ ապահովելու դեղերի վերաբերյալ հստակ և մատչելի տեղեկատվություն:
2. Ներդնել պատշաճ դեղատնային գործունեության պահանջները ՀՀ-ում՝ բարձրացնելու դեղագործական խորհրդատվության որակը և ապահովելու դեղերի ռացիոնալ օգտագործումը:
3. Մշակել դեղագործական հոգածության հայեցակարգը ՀՀ-ում՝ հաշվի առնելով դեղատնային ծառայությունների բարելավման և բուժառուների առողջության պահպանման պահանջները:
4. Ներդնել օրենսդրական կարգավորում, որի համաձայն յուրաքանչյուր դեղատանը պարտադիր կլինի աշխատել առնվազն մեկ բարձրագույն կրթությամբ դեղագետ մասնագետ, ինչպես նաև սահմանել դեղագետի և դեղագործի դերերի և պարտականությունների հստակ տարբերակումը՝ ապահովելու մասնագիտական պարտականությունների արդյունավետ բաշխումը և դեղատնային ծառայությունների բարձր որակը:

Լուսինե Նազարյանի ատենախոսական աշխատանքի արդյունքներն ամփոփված են 7 կետից բաղկացած եզրահանգումներում, որոնք ճշգրիտ և հակիրճ արտացոլում են աշխատանքում ստացված հիմնական գիտական և գործնական տվյալները: Հետազոտությունների արդյունքների հիման վրա հեղինակի կողմից՝

1. Ցույց է տրվել, որ փորլուծության ախտանիշի դեպքում բուժառուների մեծ մասը (55,4%) դեղերը գնում են առանց առողջապահական մասնագետների խորհրդատվության:
2. Ցույց է տրվել, որ սպառողների վստահությունը դեղատան աշխատակիցների նկատմամբ բավականին ցածր է՝ 73%, ինչը վկայում է դեղատնային խորհրդատվության որակի նկատմամբ ընդհանուր բացասական վերաբերմունքի մասին:

3. Պարզվել է, որ սպառողների անվտանգությունը դեղատան աշխատակիցների նկատմամբ հիմնականում պայմանավորված է նախկինում ունեցած անհաջող փորձով (38%) և դեղատան աշխատակցին չվստահելու (31%) պատճառով:
4. Ցույց է տրվել, որ դեղատան աշխատակիցների կողմից փորլուծության ախտանիշի վերաբերյալ տրամադրվող խորհրդատվությունը հաճախ լինում է ոչ պատշաճ, ինչը կարող է պահանջել լրացուցիչ ուսուցում և ստանդարտացման մեխանիզմների ներդրում՝ դեղագործական հոգածության որակը բարձրացնելու նպատակով:
5. Պարզվել է, որ փորլուծության ախտանիշի պատշաճ կառավարման համար խոչընդոտ է հանդիսանում դեղագործական հոգածության ստանդարտացման համակարգի բացակայությունը, որի պատճառով դեղատան աշխատակիցների 75%-ը չեն օգտագործում ստանդարտ սխեմա, թեև նրանցից 53%-ը հստակ ցանկություն է հայտնել ունենալ այն:
6. Մշակվել են տեղեկատվական թերթիկ և ալգորիթմ՝ նախատեսված փորլուծության ախտանիշի ճիշտ գնահատման և դեղագործական հոգածության բարելավման համար:
7. Ցույց է տրվել, որ պիլոտային ծրագրի շրջանակներում ՀՀ դեղատներում ներդրված տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի կիրառումը էականորեն բարելավել է դեղերի ռացիոնալ բաց թողնման գործընթացը, բարձրացրել դեղագործական հոգածության որակը, հեշտացրել բուժառուների ծանր ընթացքով դեպքերի բացահայտումը և նպաստել մասնագետների աշխատանքի արդյունավետությանը՝ ապահովելով արագ կոմնորոշում և համապատասխան բուժում:

Լուսինե Նազարյանի ատենախոսական աշխատանքը գրված է հայերեն լեզվով, շարադրված է համակարգչային շարվածքով 150 էջի վրա և կազմված է ներածությունից (5 էջ), գրականության տեսությունից (35 էջ), հետազոտության նյութից և մեթոդներից (9 էջ), հետազոտության արդյունքներից և քննարկումից (75 էջ), եզրակացություններից (2 էջ) ու առաջարկություններից (1 էջ), 191 սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկից ու 5 հավելվածներից: Ստացված տվյալները լուսաբանված են 8 աղյուսակներով և 40 նկարներով:

Գրականության տեսությունը վերաբերում է փորլուծության հիվանդության կանխարգելմանն ու բուժմանը, դրա դեղաբուժությանը, փորլուծության ախտանիշի դեպքում դեղագործական խորհրդատվության անհրաժեշտությանը, ինչպես նաև դեղագործական հոգածությանը և դրա ստանդարտացված մոտեցմանը փորլուծության ախտանիշի ժամանակ: Գրական ակնարկը հնարավորություն է տալիս գնահատել ատենախոսի կողմից կատարված հետազոտությունների արդիականությունն ու գիտական նորույթն այդ բնագավառում:

Ատենախոսական աշխատանքի 2-րդ գլուխը նվիրված է հետազոտությունների մեթոդաբանությանը, որն ընդգրկում է հետազոտության և դրա արդյունքների վերլուծության ու գնահատման մի շարք դասական ու ժամանակակից մեթոդներ: Կիրառվել է սոցիոլոգիական հարցման մեթոդաբանությունը՝ հիմք ընդունելով ԱՀԿ-ի

ստանդարտացված հարցաթերթիկները և փորլուծության բուժման վերաբերյալ ձեռնարկը՝ հաշվի առնելով հայկական դեղագործական շուկայի առանձնահատկությունները: Իրականացվել է քանակական տվյալների (ստացված՝ 1308 սպառողներից և 597 դեղատան աշխատակիցներից) վերլուծություն և որակական հետազոտություն՝ խորը անհատական հարցազրույցների միջոցով: Գիտական հետազոտությունների ընդունված եղանակներով գնահատվել է տվյալների հավաստիությունը, սխալի հավանականությունը, կատարվել է ուղղման վերլուծություն՝ կիրառվելով բազմակի համեմատությունների ճշգրտման համար ճշգրտման գործակից: Պահպանվել է նաև ուսումնասիրության էթիկական կոդը՝ մասնակցության կամավորության սկզբունքով և ապահովելով հետազոտվողների գաղտնիությունը:

Ատենախոսական աշխատանքի 3-րդ գլուխը նվիրված է կատարված հետազոտությունների արդյունքների քննարկմանը: Ներկայացված են դեղատան աշխատակիցների շրջանում իրականացված ուսումնասիրության արդյունքները, որոնք ցույց են տվել, որ ՀՀ-ում փորլուծության ախտանիշի կառավարումը դեղատան աշխատակիցների կողմից կառուցվածքային չէ և կարծես հիմնված է անհատական նախասիրությունների կամ նախաձեռնությունների վրա: Հետազոտության հաջորդ կարևոր խնդիրը եղել է դեղատան աշխատակիցների տեղեկատվական կարիքների գնահատումը և փորլուծության համար նախատեսված դեղագործական հոգածության ստանդարտ ուղեցույցների գործնական կիրառման նկատմամբ նրանց վերաբերմունքի ուսումնասիրությունը:

Բնակչության շրջանում իրականացված ուսումնասիրություններով գնահատվել է նաև դեղատների աշխատակիցների նկատմամբ սպառողների վստահությունը, սպառողները գնահատել են դեղատների աշխատակիցների կողմից մատուցվող ծառայությունները:

Ուսումնասիրության զգալի հատված նվիրված է դեղատնային կազմակերպություններում պիլոտային ծրագրի շրջանակներում փորլուծության համար նախատեսված դեղագործական հոգածության տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի ներդրմանը և Երևանի պետական բժշկական համալսարանի դեղագործության կառավարման ամբիոնի կատարելագործման ծրագրում ներդրմանը: Ատենախոսության վերաբերյալ առկա են որոշակի դիտողություններ.

1. Աղյուսակ 2-ում, նկարներ 2-ում և 7-ում ԵՊԲՀ-ի և ԵՊՀ-ի շրջանավարտ-դեղագետների պատասխանները առանձնացված են, որի կարիքը չկար՝ դրանք բարձրագույն կրթության մասնագետներն են:
2. Արդյո՞ք Ավեդիս Դոնաբեդյանի մոդելը լիարժեք էր դեղագործական հոգածության գնահատման համար: Ինչու՞ ընտրեցիք հենց այդ մոդելն՝ ի տարբերություն այլ հնարավոր մոտեցումների:

3. Ներդիր թերթիկը հավաստի տեղեկատվական աղբյուր է, որից կարող են օգտվել նաև դեղագետներն ու դեղագործները (Էջ 76), մինչդեռ նշվում է, որ այն չի հանդիսանում տեղեկատվական աղբյուր դեղատան աշխատակիցների համար:
4. Հեղինակն աշխատանքում, մասնավորապես 3.3 բաժնում, մանրամասնորեն նկարագրում է տեղեկատվական թերթիկի և ալգորիթմի ներդրումը դեղատնային կազմակերպություններում՝ պիլոտային ծրագրի շրջանակներում, սակայն չի նշվում փորձարկման տևողությունը:
5. Աշխատանքը գերծ չէ նաև որոշ տպագրական թերություններից ու վրիպակներից:
- Արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում Լուսինե Նազարյանի կողմից ներկայացված ատենախոսության արժեքը:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները լիովին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:


Այսպիսով, ելնելով վերը շարադրվածից, անհրաժեշտ է նշել, որ ատենախոսությունն արդիական է, ունի տեսական և գործնական նշանակություն: Այն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Լուսինե Գազիկի Նազարյանն արժանի է ԺԵ.00.01 – «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում (նիստ թիվ 9, առ 09. 06. 2025թ):

Ներկա էին գիտխորհրդի նախագահ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանը անդամներ՝ ակադեմիկոս Ա. Սադյանը, ք.գ.թ. Ա. Դադայանը (գիտքարտուղար), ք.գ.թ. Ա. Գեոլչանյանը, ք.գ.թ. Խ. Հակոբյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.թ. Ս. Պետրոսյանը, ք.գ.թ. Ս. Ափոյանը, ք.գ.թ. Մ. Շեյրանյանը, ք.գ.թ. Լ. Սահակյանը, ք.գ.թ. Տ. Սարգսյանը, դ.գ.թ. Ա. Սահակյանը և ք.գ.թ. Ա. Օստոյանը:

Գրախոս

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի
Ֆարմաթեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի
ու կառավարման ամբիոնի դոցենտ




Ա.Ե. Սահակյան

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն,
գիտական խորհրդի նախագահ



Ա.Ֆ. Մկրտչյան

Ստորագրությունները հաստատում են
ԵՊՀ գիտքարտուղար, ք.գ.թ., դոցենտ



Մ.Վ. Հովհաննիսյան

12.06.25